Հաստատված է ԵՊՀ գիտական խորհրդի

2017թ. հունվարի 26-ի նիստի թիվ 4/5 որոշմամբ

ԵՊՀ գիտական խորհրդի նախագահ Ա. Հ. Սիմոնյան

ՀԱՅԵՑԱԿԱՐԳ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ

Ինչպես կրթության, այնպես էլ կենսագործունեության բազմաթիվ այլ ոլորտների միջազգայնացումը նոր ու բազմազան հնարավորություններ է տալիս անհատին, կազմակերպությանը/համակարգին կամ պետությանը՝ շահավետորեն մաս կազմելու գլոբալ գործընթացներին և օգուտներ քաղելու դրանցից: Այս առումով պետությունները ձգտում են միջազգայնացնել իրենց գործունեության գրեթե բոլոր ոլորտները, այդ թվում՝ բարձրագույն կրթության համակարգը, որը ևս անմասն չի մնացել միջազգայնացման մարտահրավերներից և բազմաթիվ փոփոխություններ է կրել բովանդակության, որակի և կազմակերպման ձևի տեսանկյուններից:

Բարձրագույն կրթության ոլորտում միջազգայնացումը հիմնականում միտված է օտարերկրյա սովորողներ ներգրավելուն, նրանց տարատեսակ կրթական, հետազոտական և օժանդակ ծառայություններ մատուցելուն՝ ապահովելով դրանց բարձր որակը:

Միջազգայնացումը միջազգայինի, միջմշակութայինի կամ համաշխարհայինի ինտեգրումն է բարձրագույն կրթության նպատակների սահմանման, գործառույթների կատարման և ծառայությունների մատուցման գործընթացում: Միջազգայնացման գործառույթներին մեջ իրենց նշանակությամբ առանձնանում են համատեղ կրթական ծրագրերի մշակումն ու իրականացումը, ծրագրերի, դասընթացների, դասավանդման և գնահատման չափանիշների միահյուսմամբ կրթության ինտեգրումը, համատեղ հետազոտական նախագծերի իրականացումը, հետազոտության, դասավանդման բնագավառներում համատեղ նախաձեռնությունները, ինչպես նաև տարբեր շահակիցների,

այդ թվում՝ ձեռնարկությունների հետ համագործակցության ծավալումը, արտագնա և ներգնա ակադեմիական շարժունությունը, հմտությունների, կարողությունների և փորձառության փոխանակմանն ուղղված ծրագրերը:

Միջազգայնացումը ենթադրում է երկկողմանի և բազմակողմանի ավելի սերտ միջազգային համագործակցություն, ցանցային շփումներ և անդամակցություն բարձրագույն կրթական ու հետազոտական տարբեր ասոցիացիաների, ընդհանուր մասնաճյուղերի հիմնում, միջմշակութային փոխճանաչողություն և առավել սերտ փոխգործակցություն: Միջազգայնացման նպատակը նաև միջազգային աշխատաշուկայում շրջանավարտների մրցունակության բարելավումն է, սոցիալ-մշակութային հաղորդակցման կայացումն ու աշխուժացումը, առավել սերտ տնտեսական փոխգործակցության հիմքեր ստեղծելու միջոցով ազգային տնտեսության զարգացմանը նպաստելը:

Մեր երկրում բարձրագույն կրթության միջազգայնացումը բխում է միջազգային գործընկերների և այլ դերակատարների հետ քաղաքական, տնտեսական, մշակութային և հատկապես գիտակրթական ոլորտներում ծավալվող սերտ համագործակցությունից և այն հնարավորություններից, որոնք եվրոպական և միջազգային այլ կառույցներ տրամադրում են գործընթացն իրականացնելու համար:

ԵՊՀ-ն Հայաստանում կրթության միջազգայնացման առաջատարներից է: Ներկայում այն համագործակցության շուրջ 260 պայմանագիր ունի միջազգային գործընկեր համալսարանների և հետազոտական կենտրոնների հետ ամբողջ աշխարհում: Ընդ որում, գործընկերության պայմանագրերի թիվը վերջին 5 ուսումնական տարիներին աճել է 34%-ով: Գործընկեր համալսարանների հետ համագործակցությունը ծավալվում է գիտական և պրոֆեսորադասախոսական համակազմի անդամների, տեխնիկական և վարչական աշխատակիցների փոխադարձ այցելությունների շրջանակներում: ԵՊՀ-ի ավելի քան 400 դասախոսներ և հետազոտողներ յուրաքանչյուր ուսումնական տարի ներգրավվում են միջազգային կրթական կամ հետազոտական դրամաշնորհային նախագծերում:

Ի լրումն երկկողմ միջբուհական համագործակցության, ԵՊՀ-ում տարեկան իրականացվում են ավելի քան 50 միջազգային գիտահետազոտական դրամաշնորհային ծրագրեր: Դրանք ֆինանսավորվում են տարբեր միջազգային գործակալությունների և ֆոնդերի կողմից, ինչպիսիք են՝ NATO SFP, ANSEF, NFSATCRDF, ISTC, Գալուստ Գյուլբենկյան հիմնադրամ, Ֆոլքսվագեն հիմնադրամ, DAAD, ԲՀՀ, Русский Мир և այլն: Այժմ ԵՊՀ-ն ակտիվորեն ներգրավված է Եվրամիության կողմից ֆինանսավորվող ՏԵՄՊՈՒՍ և Էրազմուս+ ծրագրերում: Վերջին տարիներին ԵՊՀ-ում իրականացված համագործակցության ծրագրերը նպաստել են համալսարանի միջազգայնացմանը, ինչն իր հերթին նպաստել է

համալսարանի կառավարման, կրթության որակի ապահովման բարելավմանը, ուսումնական ծրագրերի ու դասընթացների արդիականացմանը: Էրազմուս+ Գործողություն1 և Էրազմուս+ Գործողություն2 ծրագրերի շրջանակներում ԵՊՀ-ի ներկա աշխույժ համագործակցությունն էապես նպաստում է բուհի միջազգայնացմանը. Շարժունության զարգացմանը միտված այդ ծրագրերը հնարավորություն են տալիս ուսանողներին՝ ուսումնառելու եվրոպական համալսարաններում և այնտեղ ստացած կրեդիտները որպես իրենց կրթական ծրագրի բաղկացուցիչ մաս փոխանցելու համալսարան: ԵՊՀ-ն անդամակցում է «ԱՊՀ ցանցային համալսարան» միջազգային կրթական ցանցին, ինչը հնարավորություն է տալիս ուսանողներին կրկնակի դիպլոմ ստանալու ընդունող համալսարանից և ԵՊՀ-ից: ԵՊՀ-ն անդամակցում է նաև Համալսարանների միջազգային ընկերակցությանը, Եվրոպական համալսարանների ընկերակցությանը, Եվրասիական համալսարանների ընկերակցությանը, Սևծովյան համալսարանների ցանցին և Համալսարանների նախագահների միջազգային ընկերակցությանը:

Միջազգային դրամաշնորհների տարեկան ծավալը 2008 թ.-ից աճել է մոտ 2 անգամ: Ընդհանուր առմամբ, արտաբյուջետային մուտքերը ավելացել են մոտ 38%-ով:

Երևանի պետական համալսարանը միջազգայնացումը դիտարկում է միջազգային կրթական դաշտում իր արժանի տեղը գրավելու, տեղական և արտերկրի շահակիցների ակնկալիքները բավարարելու, ինստիտուցիոնալ արդյունավետ բարեփոխումներ կատարելու և Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացմանը նպաստելու տեսանկյունից: ԵՊՀ միջազգայնացման քաղաքականությունը համահունչ է ԵՊՀ-ի հիմնարար արժեքներին և նպաստում է դրանք կյանքի կոչելուն: Համալսարանը ուսանողի հաջողությունը դնում է իր ակադեմիական գործունեության և օժանդակ ծառայությունների կազմակերպման, կրթական քաղաքականության և կրթական ծրագրերի մշակման հիմքում, շահագրգռում ուսանողին՝ փոխանակման ծրագրերի շրջանակներում արտերկրում ուսումը շարունակելու: Ըստ այդմ, ԵՊՀ-ն մեծապես կարևորում է շարժունության աջակցմանն ուղղված արդյունավետ ծառայությունների պատշաճ մատուցումը (օր.՝ աջակցություն շարժունության գործընթացի կազմակերպմանը, աջակցություն արտերկրում բուն ուսումնառության, վերապատրաստման ընթացքում և վերադարձից հետո):

Մասնագիտական որակները բարձրացնելու նպատակով համալսարանի գիտամանկավարժական կազմին հնարավորություն է ընձեռվում վերապատրաստվել արտերկրում, արտասահմանյան գործընկեր բուհերի հետ իրականցնել համատեղ հետազոտական ծրագրեր՝ այդպիսով նպաստելով գիտաշխատողների և դասախոսների մասնագիտական հմտությունների, կարողությունների և փորձառության բարելավմանը:

Համալսարանը կարևորում է յուրաքանչյուր ուսանողի և աշխատողի ակադեմիական ազատությունը, խրախուսում միջազգային նախագծերում ներգրավվելը: Գիտակցելով իր դերը մեր երկրում գիտելիքների վրա հիմնված հասարակություն ձևավորելու գործում՝ Համալսարանը ձգտում է դառնալու միջազգային չափանիշներին համապատասխան համազգային ու տարածաշրջանային գիտակրթական կենտրոն: Համալսարանը ձգտում է նաև գիտության, հետազոտության և կրթության միջազգայնացմանը, մեծ տեղ է հատկացնում օտար լեզվով կրթական ծրագրերի և/կամ առարկաների առկայությանը:

Համալսարանի միջազգայնացման ենթակառուցվածքը միայն ԵՊՀ միջազգային համագործակցության վարչությամբ չի սահմանափակվում: Համալսարանը մեծապես կարևորում է, որ միջազգայնացման գործընթացներում ներգրավված լինեն գիտակրթական ու վարչական հնարավորինս շատ ստորաբաժանումներ, ինչը կնպաստի համապատասխան ծառայությունների որակի բարելավմանը և օտարերկրյա սովորողների թվի աճին: Միջազգայնացման հիմնավոր ենթակառուցվածքի կարևոր պայման է նաև միջազգայնացման ցանցի, միջազգայնացման աջակցության համացանցային պորտալի և վիրտուալ պլատֆորմի գոյությունը: Ինչպես կրթության և հետազոտության որակի բարձրացումը, այնպես էլ ենթակառուցվածքների շարունակական բարելավումը, ինչին մշտապես ձգտում է ԵՊՀ-ն, համալսարանի միջազգայնացման անհրաժեշտ նախապայման է:

ԵՊՀ-ն, ունենալով միջազգային համագործակցության բավականին հարուստ փորձ, կարիք ունի վերանայելու միջազգային պայմանագրերի կնքման ընթացակարգը՝ մասնավորապես շեշտը դնելով պայմանագրի շրջանակներում ամրագրված կողմերի պարտականությունների, ակնկալվող արդյունքների, կոնկրետ գործողությունների և դրանց գնահատման մեթոդաբանության վրա: Միջազգային համագործակցության արդյունավետությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է այն բարելավել ոչ միայն քանակական, այլև որակական տեսանկյունից, այն է՝ հռչակագրային փաստաթղթերից անցում դեպի պլանավորված գործողությունների, աշխատանքային պլանների և արդյունավետ գործող պատասխանատուների ինստիտուտի:

Միջազգային համագործակցության գնահատման շրջանակներում ԵՊՀ-ն կարևորում է հետևյալ բաղադրիչները՝

- Կրկնակի դիպլոմով օտարալեզու մոդուլներ և օտար լեզվով դասավանդվող առարկաներ, դրանց քանակը, օտարերկրյա դասախոսներ, կրթական ծրագրի միջազգայնացված բովանդակություն, ուսումնառության մեջ իրականացվող հետազոտական աշխատանքների օտարերկրյա ղեկավարներ, հետազոտական թեմաների միջազգային ուղղվածություն,

- ներգնա և արտագնա շարժունության աճ,
- միջազգային դրամաշնորհային ծրագրերում ԵՊՀ-ի մասնակցության աճ,
- միջազգային գիտակրթական ասոցացիաներում, կոնսորցիումներում ներգրավվածության ընդլայնում,
- միջազգային նոր գործընկերների ձեռքբերում,
- հասանելիության և տեսանելիության մակարդակի բարձրացում՝ ներառյալ օտար լեզվով տեղեկատվություն տրամադրելու հնարավորությունները, մասնակցությունը միջազգային հեղինակավոր վարկանշավորման գործընթացներին և կրթական տոնավաճառներին,
- ենթակառուցվածքների և մատուցվող օժանդակ ծառայությունների միջազգայնացում (ակադեմիական ծառայություններ – խորհրդատվություն, տեղեկատվություն, դիպլոմի հավելվածներ, սոցիալական ծառայություններ – ճանաչողական, զբոսաշրջային այցեր, մշակութային և զվարճանքի միջոցառումներ, պրակտիկ ծառայություններ – կեցություն, արտոնագիր, ֆինանսական ծառայություններ – կրթաթոշակների հնարավորություն):

ԵՊՀ զարգացման 2016-2020 թթ. ռազմավարական ծրագրում մեծ նշանակություն է տրվում Համալսարանի միջազգայնացման ռազմավարությանը, որի բաղադրիչներն են՝

- Օտարալեզու կրթական ծրագրերի ու մոդուլների զարգացումը,
- Շարժունության ծրագրերի մասին իրազեկվածության աստիճանի բարձրացումը,
- Ներգնա և արտագնա շարժունության խթանումը,
- Միջազգայնացմանը նպաստող քաղաքականության զարգացումը. ռազմավարական այս խնդրի իրագործման համար նախատեսվում է վերանայել միջազգայնացման գործընթացների առանցքային ցուցիչների լրակազմը, հստակեցնել միջազգայնացման դերակատարների գործառույթները, կիրառել են նրանց խրախուսման մեխանիզմներ:
- Միջազգայնացման գործշընթացների գնահատման առանցքային ցուցանիշների լրակազմի մշակում. Այդ ցուցանիշների հիման վրա երկամյա պարբերականությամբ իրականացնելու է համեմատական վերլուծություն:
- Համալսարանի հետազոտական գործունեության միջազգայնացման խթանում. ռազմավարական այս խնդրի իրագործման համար նախատեսվում է ավելացնել օտար լեզուներով հրատարակվող գիտական հանդեսների թիվը, շարունակել կազմակերպել միջազգային գիտաժողովներ, օժանդակություն ցուցաբերել արտասահմանյան գիտաժողովներին ԵՊՀ աշխատողների մասնակցությանը, աջակցել արտասահմանյան գործընկերների հետ համագործակցության շարունակականությանն ու խորացմանը:

- Հավաքագրման և ուսուցման կազմակերպան համալիր միջոցառումների իրականացմամբ Համալսարանի կրթական բոլոր աստիճաններում օտարերկրյա ուսանողների համակազմի մեծացմանն ուղղված ակտիվ գործունեության ծավալում:

ԵՊՀ զարգացման 2016-2020թթ. ռազմավարական ծրագրի մեջ համալսարանի միջազգայնացմանը վերաբերող դրույթները համահունչ են ԵՊՀ առաքելությանն ու կարևորագույն նպատակներին, բխում են դրանցից և կոչված են նպաստելու այդ առաքելության ու նպատակների կենսագործմանը:

Սույն հայեցակարգում արտացոլված ձգտումների և դրանցից բխող նպատակների ու խնդիրների իրագործման արդյունքում ԵՊՀ-ն ակնկալում է՝

- բարձրացնել իր կրթական ծառայությունների որակը՝ բավարարելով առկա շահակիցների կարիքներն ու ակնկալիքները,
- մեծացնել իր նկատմամբ հետաքրքրվածությունը օտարերկրյա սովորողների և այլ շահառուների շրջանում,
- ընդլայնել իր միջազգային համագործակցության շրջանակը,
- ներգրավել ֆինանսավորման նոր աղբյուրներ և միջոցներ,
- բարելավել իր դիրքերն ազգային, տարածաշրջանային և համաշխարհային վարկանիշավորման աղյուսակներում: